

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքունյանի, Բազմասեր Առաքելյանի, Մուրադ Գուլոյանի և Մելիք Մանուկյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-377-04.11.2013-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի, բայց ոչ ավելի, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 50 տոկոսի չափով՝ ներկայումս գործող 30 տոկոսի փոխարեն:

Ներկայացված առաջարկության ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հետևյալ նկատառումներով:

Նախագծի ընդունման հիմնավորմամբ ներկայացված չէ այնպիսի տեղեկատվություն կամ վերլուծություն, որով կհիմնավորվեր վերոնշյալ արտոնության շրջանակներում կիրառվող սահմանաչափի ցածր լինելը: Այս առումով, պարզ չէ, թե արտոնության տրամադրումից մինչև այժմ քանի տնտեսավարող սուբյեկտներ են պատրաստակամություն ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել գործարար ծրագրեր, սակայն չեն ներկայացրել՝ պայմանավորված միայն այն հանգամանքով, որ արտոնության շրջանակներում կիրառվող սահմանաչափը ցածր է: Միաժամանակ, հայտնի չէ, թե որքան աշխատատեղեր պետք է ստեղծվեին այդ ծրագրերի շրջանակներում, որքան լրացուցիչ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ պետք է կատարվեին այդ աշխատատեղերի մասով և այդ գումարը համապատասխան հաշվետու տարվա շահութահարկի քանի տոկոսը պետք է կազմեր:

Պարզ չէ նաև, թե ներկայացված առաջարկության ընդունումն ինչպես կազդի արտոնությունից օգտվելու իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի վրա և արդյոք արտոնության շրջանակներում կիրառվող սահմանաչափի վերանայումը ինքնանպատակ չի լինի:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ միայն համապատասխան վերլուծության արդյունքների ու անհրաժեշտ տեղեկատվության առկայության դեպքում կարելի է եզրահանգումներ կատարել արտոնության համար նախատեսված սահմանաչափի մեծության հիմնավորվածության վերաբերյալ:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն նախագծի ընդունումը կլիթանի գործարար ծրագրերի շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչի արդյունքում կկրճատվի գործազրկության մակարդակը:

Այդ կապակցությամբ, գտնում ենք, որ միայն վերոնշյալ արտոնությունն առանձին վերցրած բավարար չէ նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու համար: Մեր կարծիքով այդ արտոնության շրջանակներում կիրառվող սահմանաչափի բարձրացումը որևէ նշանակալի

խնդիր լուծել չի կարող՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերոնշյալ արտոնության կիրարկումն ապահավող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի «Գործարար ծրագրերի հավանության արժանացման, ինչպես նաև այդ ծրագրերի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 346-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2013 թվականի ապրիլի 26-ից, սակայն մինչև այժմ որևէ կազմակերպություն չի դիմել գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով շահութահարկի արտոնությունից օգուվելու համար:

Հետևաբար խնդիրն արտոնության համար նախատեսված սահմանաչափի մեծության մեջ չէ: Նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը պետք է իրականացվի գործարար միջավայրի շարունակական բարելավման այնպիսի համալիր ծրագրերի շրջանակներում, ինչպիսիք յուրաքանչյուր տարվա համար ընդունվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Օրենքի նախագծի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության
բնագավառի վրա ազդեցություն չի ունենա::

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
<<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
(այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի,
բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական
հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա
բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող
իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:
Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների
գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ
կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին
ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և
ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել
են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական** ազդեցություն:

Նախագծով բարձրացվում է ՀՀ ռեզիդենտների կողմից գործարար ծրագրերի իրականացման համար շահութահարկի գծով գումարի նվազեցման առավելագույն շեմը, ինչը կհանգեցնի ՀՀ կառավարության հավանությանն արժանացած գործարար ծրագրերն իրականացնող ռեզիդենտների ծախսերի կրճատմանը և գործունեության իրականացման համար հավելյալ դրամական միջոցների ներգրավմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նվազեցվում է ՀՀ կառավարության հավանությանն արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտի գործարար ծրագրի մեկնարկման և դրան հաջորդող երկու տարիների շահութահարկի գումարը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն**:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի, բայց ոչ ավելի, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 50 տոկոսի չափով, ներկայումս գործող 30 տոկոսի փոխարեն:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի «Գործարար ծրագրերի հավանության արժանացման, ինչպես նաև այդ ծրագրերի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 346-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2013 թվականի ապրիլի 26-ից, սակայն մինչև այժմ որևէ կազմակերպություն չի դիմել գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով շահութահարկի արտոնությունից օգտվելու համար, ինչպես նաև այն, որ պարզ չէ, թե ներկայացված առաջարկության ընդունումը ինչպես կազդի արտոնությունից օգտվելու իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի վրա և արդյոք արտոնության շրջանակներում կիրառվող սահմանաչափի վերանայումը ինքնանպատակ չի լինի, գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-377-04.11.2013-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 39.3-րդ հոդվածի առաջին մասում «30 տոկոսը:» բառերը փոխարինել «50 տոկոսը:» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի 39.3-րդ հոդվածը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարության հավանությանն արժանացած՝ գործարար ծրագրեր իրականացնող ռեզիդենտների արտոնությունները: Համաձայն այդ հոդվածի առաջին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտի (բացառությամբ առետրի կամ ֆինանսական ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտի)՝ գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը: Նախագծով առաջարկվում է 30 տոկոսը ավելացնել մինչեւ 50 տոկոս:

Այսօրվա գործազրկության ահազանցող պայմաններում նախագծով առաջարկվող փոփոխությունը խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության Կառավարության հավանությանն արժանացած՝ գործարար ծրագրեր իրականացնող ռեզիդենտների համար՝ ստեղծելու նոր աշխատատեղեր՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս նվազեցնել հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարը արդեն մինչեւ 50 տոկոսի չափով: Արդյունքում որոշակիորեն կբարելավվի գործարար, ներդրումային միջավայրը, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կկրճատվի գործազրկությունը երկրում: